ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» փետրվար 2015թ. N 38

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ (ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ) ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օերնքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի բ) ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 50-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2015 թվականի փետրվարի 10-ի թիվ 2 արձանագրությունը և մրցութային ամփոփ թերթիկը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ներմարզային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի կողմից 2015 թվականի փետրվարի 10-ին անցկացված մրցույթի վերաբերյալ արձանագրությունը:
2. Թույլատրել «Յուրամի» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը սպասարկելու «Արմավիր-Ամասիա» միկրոավտոբուսային երթուղին 4 (չորս) տարի ժամկետով:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 08 դեկտեմբերի 2014թվականի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2011թվականի հունիսի 23-ի N 210 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 233 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*